80/24
=24=

ԿՈՄՍԵՐԻՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ԳՈՒԲԵԼՄԱՆ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՅԵՎ ԱՆԻ ՏՆՏԵՍԱՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պետական հրատարակչություն
Երևան—1926

(11+15)
18 JUL 2017
3231330

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԵՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՅԵՎ ԱՆԻ ՏՆՏԵՍԱՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հ. Ս. Հ. Հ. ԱՐԽԻՎ ԳՐԱՊԱԼԱՏ
Հայկոմբանկ ՀՍՀՀ ՖԻՆԱՆՍԱՅԻՆ ՊԱԼԱՏԱ ՏԱՆ ԳՐԱՊԱԼԱՏ

Պետական հրատարակչություն
Երևան—1926

Դրատեսվար № 259 ը. Տիրաժ 4000.
Գրահրատի առաջին տպարան Վաղարշապատում

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՄՄՈՒ
1-2352 գր

ԱՌԱՋԱԲԱՆ·

Մենք բոլորս էլ գիտենք, թե ինչ խոշոր դեր է կատարում և պետք է կատարի աշխատավոր յերիտասարդության ներկայացուցիչը արհմիություններին ստորին որգաններում այդ յերիտասարդության աշխատանքի պաշտպանության ու նրա պայմանների բարելավման գործում։ Սակայն, չնայած դրան, մինչև որս այդ աշխատանքները տարվել են վոչ վորոշ սիստեմով, այլ ղեկավարվելով յուրաքանչյուր դեպքի համար կցկտուր կարգադրություններով կամ, լավագույն դեպքում, պարբերական մամուլում հայտարարված համապատասխան ցուցմունքներով, այսպիսով ստեղծելով յերիտ-ներկայացուցչի համար մի ավելորդ և շատ դեպքերում դժվարին ու մինչև

անգամ անիրագործելի աշխատանք՝ ընթացիկ գրականության մեջ անհրաժեշտ ցուցմունքները գտնելու։

Այդ պակասն ահա գալիս է լրացնելու ընկ. Դարախչյանի բրոշյուրը, որն իմի հավաքելով յերիտասարդների ու անչափահասների աշխատանքի պաշտպանությանը վերաբերող բոլոր կանոնադրությունները, տալիս է ընդարձակ ու մանրամասն մեկնաբանություններ յերիտ-ներկայացուցիչների անելիքների մասին, այսպիսով հանդիսանալով նրանց համար մի անհրաժեշտ ուղեցույց։

Սա մի ուղեցույց է, որն իր հինգ մատի պես պետք է գիտենա յերիտներկայացուցիչը գործարանային տեղկոմներում և բատրակկոմներում ու ամեն մի քայլափոխում առաջնորդվի նրանով։

ՀԼԿՅԵ. Միությանն Կ. Կ.
Տնտեսա-իրավական Հանձնաժողով

ԼԿՅԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԿՈՄՆԵՐՈՒՄ.

Յուրաքանչյուր գործարտեղկոմում ԼԿՅԵՄ բջիջը նշանակում է մի ներկայացուցիչ արհմիության տեղական աշխատանքներին մասնակցելու համար։ Յեթե ձեռնարկությունը ԼԿՅԵՄ բջիջ չունի, ապա հիշված աշխատանքները տանում է Կոմյերիտմիության ներկայացուցիչը արհմիության կենտվարչություններում և ԼԿՅԵՄ գավկոմները, որոնք աշխատակից են նշանակում տվյալ ձեռնարկության մեջ աշխատելու։

Այդ ներկայացուցիչը տանում է ձեռնարկության յերիտասարդների մեջ հասարակական աշխատանք, ղեկավարվելով արհմիության և Կոմյերիտմիության որգանների, յերիտասարդության

ընդհանուր ժողովի և ԼԿՅԵՄ ու տեղկոմի խորհրդակցությունների վորոշումներով. իր աշխատանքներով նա հաշվետու է ԼԿՅԵՄ, արհմիության Կ. Վ. ներկայացուցչի և ԼԿՅԵՄ Կ. Կ.-ի առաջ, ինչպես նաև տեղի աշխատանքներին ծանոթ լինելու համար հաշվետու է նաև տվյալ ձեռնարկության յերիտասարդության ընդհանուր ժողովի առաջ։ Նա հաշվետու է նաև համապատասխան գավկոմի և ԼԿՅԵՄիության բջիջի առաջ։ Այդ բոլորն արվում է նրա համար, վորպեսզի ծանոթանան յերիտասարդները և նրա բարձրագույն ղեկավար որգանները, թե ինչ է կատարել ներկայացուցիչը գործարտեղկոմում։ Հաշվետվության ժամանակ արվում են զանազան առաջարկություններ, յեթե նրանք իսկապես բարելավում են տվյալ հիմնարկության կամ ձեռնարկության յերիտասարդության դրությունը։

Ծանոթություն.—Ձեռնարկության յերիտասարդների ընդհանուր ժողովի վորոշումները պարտադիր են, յեթե նրանք չեն հակասում արհմիության և Կոմյերիտմիության որգանների վորոշումներին։ Իսկ յեթե նրանք ընդունելի չեն, ապա այդ հարցերը դրվում են համապատասխան ժողովում։

ԼԿՅԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏԵՂԿՈՄՆԵՐՈՒՄ.

ԼԿՅԵՄ ներկայացուցչի հիմնական ու անմիջական խնդիրը տեղկոմում հանդիսանում է տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության յերիտասարդների կենցաղի ու դրության բարելավումը, աշխատանքի պաշտպանությունը, հեղափոխական, դասակարգային գիտակցության զարգացումը և կուլտուրկլուբական ու պրոֆտեխնիկական մակարդակի բարձրացումը։ Այդ նպատակով ներկայացուցչին առաջադրվում են հետևյալ խնդիրները.—

1. Հետևել, վոր տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության (թե ժասնավոր և թե պետական) վարիչները

կատարեն այն բոլորը, ինչ վոր պարտադիր է յերիտասարդության համար. աշխատանքի նորմայի վորոշումը, անչափահասների վարձատրությունը— կրճատելով նրանց բանվորական որը, անչափահասների վարձատրությունը հարկավոր է աշխատանքի համար մեծերի հետ հավասար և 2. Ձաշխատած ժամերի վարձատրություն, 14—16 տարեկանների համար 4 ժամյա բանվորական որ, 16—18 տար.—6 ժամյա, տարեկան մեկ ամիս արձակուրդ տալ, անչափահասներին արձակուրդի փոխարեն կոմպենսացիոն վարձատրություն չտալ, այլ թողնել վոր հանգստանա, աշակերտը պետք է աշխատի լավ վորակյալ բանվորի մոտ սովորելու համար, աշակերտության ժամանակաշրջանը սահմանել վոչ ավել 4 տարուց, անչափահասների քանակությունը աշխ-ժողկոմատի վորոշածից պակաս չպետք է լինի, աշակերտին չպետք է ծառայեցնել կողմնակի նպատակների, աշա-

կերան իրավունք ունի պահանջելու փորձնական աշխատանք՝ բարձր կարգին անցնելու համար։

Վնասակար ու ծանր աշխատանքներ անչափահասներին արգելվում է, անչափահասներին չթողնել գիշերային աշխատանքների։ 16 տարեկանից ցածր հասակ ունեցողներին չընդունել աշխատանքի, յեթե չունի առողջության վկայական։ Բրոնիա լրիվ անցկացնել հիմնարկության մեջ, հետևել, վորպեսզի չխախտվի արհմիության և տնտեսա-իրավական որգանի մեջ կնքված կոլեկտիվ պայմանագիրը։

Ուրեմն ԼԿՅԵՄ ներկայացուցիչը գործարկոմում կամ տեղկոմում հետևում է, վորպեսզի այդ բոլորը կատարվեն։ Յեթե նա նկատում է շեղումներ, հայտնում է իր ռայոնի աշխատեսչին, վորը լուրջ ուշադրություն կդարձնի այդ խախտումների վրա։ Կարելի յե գործել նաև արհմիության կենտկոմի միջոցով։ Վորպեսզի Կոմյերիտմիու-

թյան ներկայացուցիչը ծանոթ լինի տեղկոմի գործունեության հետ, նա պետք է ներկա լինի տեղկոմի կամ գործարկոմի բոլոր ժողովներին, գնահատիչ-կոնֆլիկտային հանձնաժողովի նիստերին, առաջադրի այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են յերիտասարդությանը, և ակտիվ կերպով մասնակցի իր հարցն անցկացնելու գործում. յեթե չի հաջողվում, նա իրավունք ունի այդ հարցը փոխադրել պրոֆորգանների մոտ, որտեղ կմասնակցի Կոմյերիտմիության արհմիության Կ. Վ. ներկայացուցիչը։

ԼԿՅԵՄ ներկայացուցիչը պետք է մասնակցի աշխատանքի ընդունման և հեռացման, ինչպես նաև յերիտասարդների պաշտոնների փոփոխությունների գործին. գոյություն ունեցող ընդհանուր կանոնների և կոլեկտիվ պայմանների հիման վրա այդ բոլորը չը-պետք է կատարվի առանց նրա գիտության։

Պետք է միջոցներ ձեռք առնի բարելավելու յերիտասարդների կյանքը և աշխատանքի պայմանները, նպաստի այն միջոցներին, որոնք բարելավում են յերիտասարդ աշխատավորության բնակարանային կացությունը, որովհետև լավ բնակարանից է կախված նրա առողջությունը։ Պետք է գրավի յերիտասարդներին քաղ-պրոֆաշխատանքների, ֆիզ-կուլտուրայի, պրոֆ-տեխնիկական կրթություն ստանալու և այլն։

ԼԿՅԵՄ ներկայացուցիչն ակտիվ կերպով պիտի մասնակցի տվյալ ձեռնարկության բոլոր յերիտասարդներին գրավելու ակումբային աշխատանքների, որտեղ կարդացվում են դասախոսություններ, տրվում են ներկայացումներ, լինում են սպորտական պարապմունքներ և ուրիշ կուլտուր-կրթական աշխատանքներ։ Ձեռնարկությունը պրոֆմիության Կ. Վ. ներկայացուցչի, գավկոմի տեղկոմական լիազորի կամ ԼԿՅԵՄ համապատասխան կոմիտեյի ղեկավարու-

թյամբ պետք է կանոնավոր կերպով ստանա ու տարածի թերթեր և ժուրնալներ, ինչպես, որինակ՝ «Ավանգարդ», «Մաճկալ», Մասկվայի «Կոմսոմոլի Պրավդա» և միությունների բյուլլետեններ ու ժուրնալներ, որինակ՝ «Աշխատանքը»։ Այդ բոլոր թերթերը մեր յերիտասարդությանը հնարավորություն են տալիս ծանոթանալ մեր ամբողջ յերիտասարդությանը և նրան հետաքրքրող հարցերին։

Պետք է նպաստել անգրագիտության շուտափույթ վերացմանը։ Մասնակցել յերիտասարդության վորակավորման բարձրացման ու նրա դաստիարակության գործը լավ հիմքերի վրա դնելու գործին։ Աջակցել, վոր դպրոցական հաստատություններն ուղարկվեն պրոլետար յերիտասարդները և բատրակները։

Տվյալ հիմնարկության կամ ձեռնարկության յերիտասարդության մեջ ագիտացիա մղել արհշարժման ընթացիկ կամպանիաների շուրջը։ Գործատեղիների միջոցով կազմակերպել կոլլեկտիվ ոգնություն պիոներին համապատասխան կոլլեկտիվին և կազմակերպել Սպարտակ կոլլեկտիվ քաղխորհրդի կամ գավխորհրդի ղեկավարությամբ։

Գրավել տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության անկուսակցական յերիտասարդությունը Կոմյերիտմիության աշխատանքների ու կազմի մեջ, ինչպես նաև գրավել նրանց մասնակցելու բոլոր այն հարցերի լուծմանը, վորոնք վերաբերում են յերիտ-շարժմանը պրոֆմիություններում, կոոպերացիայում և հասարակական ուրիշ ասպարեզներում։

Զարգացնել միացած յերիտասարդության մեջ միութենական կարգապահություն և գիտակից վերաբերմունք դեպի իր աշխատանքային պարտականությունները։

Կատարել արհմիության Կ. Վ. Ներկայացուցչի կամ հավապատասխան գավկոմի առաջադրած բոլոր խնդիրները։

Յերիտասարդության մեջ աշխատողն իրեն առաջադրած խնդիրը կատարելիս չպետք է խառնվի ադմինիստրացիայի կարգադրություններին ու գործողություններին։

Աջակցել տեխնիկական ապպարատի կանոնավոր գործունեությանը և նրա մեջ աշխատող յերիտասարդության ժամանակի լավ ոգտագործմանը։ Միջոցներ ձեռք առնել ծանոթացնելու յերիտասարդությանը տվյալ հիմնարկության խնդիրների, ֆունկցիաների, կառուցվածքի և աշխատանքների ընթացքի հետ։

Ծանոթություն.—Իր բոլոր նկատողությունները հիմնարկության վիճակի, ադմինիստրացիայի անկանոն գործողությունների և թերությունների մասին, ինչպես նաև այդ հողի վրա ծագած բոլոր թյուրիմացությունների մասին, յերիտասարդության մեջ աշխատողն անհապաղ տեղեկացնում է ԼԿՅԵՄ Կ. Վ. ներկայացուցչին կամ գավ-վարչությանն ու ԼԿՅԵՄ գավկոմին, իսկ այնտեղ միջոցներ ձեռք կառնվեն համապատասխան կազմակերպությունների միջոցով։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ ՅԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ամիսը մի անգամից վոչ ուշ յերիտասարդության մեջ աշխատողը հրավիրում է յերիտասարդների ընդհանուր ժողով, վորտեղ տալիս է ինֆորմացիոն զեկուցումը գործունեության մասին և քննության է դնում հարցերը, վորոնք առաջադրում են հիշված աշխատողի ու ընդհանուր ժողովի և Կ. Վ. ներկայացուցչի ԼԿՅԵՄ գավկոմի կողմից։

Արտակարգ ժողովներ հրավիրվում են ըստ անհրաժեշտության, կամ յեթե պահանջեն յերիտասարդության մեկ յերրորդը, Կ. Վ. գավ-վարչության ներկայացուցիչը և կամ տեղկոմը։

Ժողովի հրավիրման մասին 2 որ առաջ յերիտասարդության մեջ աշխատողը հայտնում է Կ. Վ. կամ գավ-վարչության ներկայացուցչին և ձեռնարկությունների յերիտասարդությանը։

Ծանոթություն.— Յերիտասարդության ընդհանուր ժողով հրավիրվում է ԼԿՅԵՄ տեղական բջիջի և գավկոմի սանկցիայով և գիտությամբ. վորպես կանոն՝ ընդհանուր ժողովը պետք է տեղի ունենա վոչ բանվորական ժամերին. միայն բացառիկ դեպքերում ադմինիստրացիայի կամ ԼԿՅԵՄ Կ. Վ. կամ գավ-վարչության թույլտվությամբ բանվորական ժամերին է տեղի ունենում։

Ընդհանուր ժողովում հարցերի քննությանն ու վորոշմանը կարող են մասնակցել բոլոր յերիտասարդները, վորոնք պրոֆիությունի անդամ են. բոլոր վորոշումները կայացվում են ձայների պարզ մեծամասնությամբ։ Ընդհանուր ժողովը որինական է համարվում, յեթե ներկա յե յերիտասարդների մեծամասնությունը։ 2-րդ ժողով հրավիրելիս հայտարարում են 3 որ առաջ, և ժողովը իրական է արդեն անկախ ներկա յեղողների թվից։

Ժողովի արձանագրության պատճենը 3 որից վոչ ուշ ներկայացվում է յերի-

տասարդության մեջ աշխատող ԼԿՅԵՄ ներկայացուցչին կամ գավկոմին, վորտեղից այդ պատճեններն ուղարկվում են ՀԼԿՅԵՄ Կ. Կ.-ին։ Կ. Կ.-ի տնտեսական կոմիսսիան կարող է կասեցնել, վերացնել կամ փոփոխության յենթարկել ընդհանուր ժողովի այն վորոշումները, վորոնք հակասում են արհմիության ու Կոմյերիտմիության բարձրագույն որգանների վորոշմանը և նույն որգանների աշխատանքների ընդհանուր գծին։

Ծանոթություն. — Շահագրգռվածները կարող են բողոքել ընդհանուր ժողովի վորոշման դեմ արհմիության քարտուղարության և ԼԿՅԵՄ Կ. Վ., գավ-վարչության ներկայացուցչին և կամ, վերջապես, ԼԿՅԵՄ կենտկոմին։

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ։

Յերիտասարդության մեջ տարվող աշխատանքների գործավարությունը և հաշվապահությունը տարվում է տեղ-

կոմի կամ բատրակկոմի տեխնիկական ապպարատի միջոցով։

Յերիտասարդության մեջ աշխատողը պարտավոր է 3 ամիսը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնել ԼԿՅԵՄ Կ. Կ. կամ կենտվարչության ներկայացուցչին իր գործունեության մասին գրավոր կերպով. նույնը ներկայացնում է ԼԿՅԵՄ համապատասխան գավկոմին, վորտեղից դրանց պատճեններով պետք է ուղարկեն ՀԿԼՅԵՄիության կենտկոմի տնտեսական հանձնաժողովին։

Հիմնարկության կամ ձեռնարկության լիկվիդացիայի դեպքում յերիտասարդության մեջ աշխատողը պարտավոր է իր գործերը հանձնել ԼԿՅԵՄ արհմիութենական կամ գավ-վարչության ներկայացուցչին։

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՈՒ ԱՆԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԳՈՐԾԱՐԿՈՄՈՒՄ, ՏԵՂԿՈՄՈՒՄ, ԳՆԱՀԱՏԻՉ-ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՅԵՎ ԲԱՏՐԱԿԿՈՄՈՒՄ.

1. Դու ընտրվում ես նրա համար, վորպեսզի գործարկոմում, տեղկոմում և Գ.-Կ. հանձնաժողովում պաշտպանես քո հիմնարկության կամ ձեռնարկության յերիտասարդների շահերը։

2. Դու պետք է գիտենաս յերիտասարդների աշխատանքի նոր կոդեքսը, բացատրես այն յերիտասարդության և հետևես, վոր կանոնավոր կիրառվի կյանքում։

3. Դու պետք է իրազեկ լինես տեղական ու արհեստակցական որգանների բոլոր այն վորոշումներին, վորոնք վերաբերում են աշխատավոր յերիտասարդների աշխատանքին և կենցաղին, շարունակ ծանոթանալով և ծանոթացնելով բոլոր յերիտասարդներին

այդ հարցի մասին յեղած գրականության հետ։

4. Դու պետք է ծանոթացնես յերիտասարդներին պրոֆկազմակերպությունների նշանակության և նրանց առաջ դրված աշխատանքային հարցերի հետ, ինչպես նաև բանվոր յերիտասարդության կենցաղի, դաստիարակության հարցերին և ագիտացիա մղես բանվոր յերիտասարդության արհմիության մեջ մտնելու ոգտին։

5. Դու պետք է շարունակ հաշվի առնես բանվոր յերիտասարդության շահերը, պահանջներն ու հարցապնդումները և աշխատես կիրառել կյանքում։

6. Դու պետք է ճիշտ գաղափար ունենաս քո հիմնարկության կամ ձեռնարկության բանվոր յերիտասարդության վիճակի մասին, այդ պատճառով քո հիմնարկության բոլոր յերիտասարդներին պետք է գրանցման յենթարկես։

7. Դու պետք է աշխատես լավացնել բանվոր յերիտասարդության, գործարանային աշակերտության աշխատանքի, կենցաղի և դաստիարակության պայմանները։

8. Վորպեսզի քո աշխատանքները հաջող ընթանան, դու պետք է ներկա գտնվես գործարկոմի կամ տեղկոմի և Գ.-Կ. Հ. բոլոր ժողովներին և այնտեղ պաշտպանես յերիտասարդության շահերն ու անցկացնես նրանց պահանջները։

9. Հիմնարկության ադմինիստրացիայի և յերիտասարդության մեջ ծագած կոնֆլիկտները պետք է լուծես տեղկոմի կամ գործարկոմի հետ միասին։

10. Պետք է հետևես վոչ միայն քո հիմնարկության, այլև տնայնագործ յերիտասարդների կյանքին, տեղեկություններ հավաքես նրանց մասին, յերիտասարդների աշխատանքների կոդեքսի խախտման մասին և ներկայացնես տվյալ շրջանի աշխատեսչին, վորը միջոցներ ձեռք կառնի։

11. Պետք է սերտ կապ պահպանես բջիջի հետ, որի ներկայացուցիչն ես ընտրվել տեղկոմում կամ գործարկոմում և Գ.-Կ. Հ.-ում, նաև ԼԿՅԵՄ գավկոմի և ԼԿՅԵՄ արհմիութենական ներկայացուցչի հետ և կանոնավոր կերպով հաշվետվություններ ներկայացնես այդ կազմակերպություններին։

12. Դու պետք է հետևես, որպեսզի կոլեկտիվ պայմանագրերում յերիտասարդության վերաբերող կետերը մտցվեն և այդ կետերը կանոնավոր կատարվեն։ Կոլեկտիվ պայմանագրերին պետք է ծանոթացնել ԼԿՅԵՄ-թյան ներկայացուցչին և քննության դնել բջիջի ժողովում։

13. Պետք է հետևես, որպեսզի 16 տարեկանից ցած անչափահասն առանց աշխատեսչի թույլտվության աշխատանքի չընդունվի։

14. Պետք է լավ հետևես, որպեսզի 16 տարեկանից փոքրերն աշխատեն 4 ժամ, իսկ մինչև 18 տարեկանները՝ 6 ժամ։

15. Պետք է հետևես, որպեսզի անչափահասներին գիշերային և արտաժամյա աշխատանքներ չտան։

16. Պետք է հետևես, որ չվորակված անչափահասին հատավճար աշխատանք չտան։

17. Պետք է հետևես, որ յուրաքանչյուր անչափահաս թե աշխատող և թե նոր ընդունվող յենթարկվի բժշկական քննության և լրացնի սանիտարական թերթիկը։

18. Պետք է հետևես, որ անչափահասները չուղարկվեն ճնասակար ու վտանգավոր աշխատանքների. այդպիսի աշխատանք կատարող անչափահասներին փոխադրում են ավելի հեշտ ու անվտանգ աշխատանքների։

19. Պետք է հետևես, որ անչափահասներին կանոնավոր կերպով արձակուրդներ տրվեն, մանավանդ ամառվա որերին, և արձակուրդները լավ ոգտագործվեն անչափահասների կողմից տանը կամ բուժանոցներում։

20. Պետք է հետևես, որ անչափահասներն ստանան արտադուստ, հասակավոր բանվորների հետ միասին։

21. Դու պետք է հետևես, որ 4—6 ժամ աշխատող անչափահասները լրիվ բանվորական որվա վարձատրություն ստանան։

22. Պետք է հետևես, որ 4 ժամ աշխատող անչափահաս բանվորների մշակման նորման չանցնի հասակավոր բանվորի նորմայի կեսից, իսկ 6 ժամ աշխատողներինը՝ յերեք քառորդից։ Դու պետք է մասնակցես մշակման նորմաները որոշելիս։

23. Պետք է մասնակցես անչափահասների տարիքը որոշելիս։

24. Դու պետք է հետևես, որ անչափահասի պահանջով նրան տրվի փորձնական աշխատանք՝ բարձր վարակ ստանալու համար։

25. Պետք է հետևես, որ անչափահասի մթերային վարձատրությունը հավասար լինի հասակավորներինին։

26. Դու պետք է հետևես, որպեսզի պարտադիր տոկոսներն անցկացնելիս անչափահասներն ընդունվեն յերիտասեկցիայի բորսայից։

27. Պետք է հետևես, որ անչափահասների կրճատումը կատարվի համեմատական չափով հասակավորների կրճատման հետ։

28. Հետևիր, որպեսզի անչափահասների քանակությունն արտադրության մեջ Ժողկոմխորհի որոշած նորմաներից պակաս չլինի (որի ցուցակը ներքևում բերում ենք)։

29. Հետևիր, որ աշակերտին կողմնակի գործերով չզբաղեցնեն։

30. Հետևիր, որ անհատ աշակերտության սովորեցման գործը կանոնավոր դրված լինի արհեստանոցներում, գործարանի բաժիններում և ընդհանրապես գործարաններում։

31. Հետևիր, որ յերիտասարդներն աշխատանքից հետո հաճախեն ակումբ, դպրոց, դասընթացներ, խրճիթ-ընթեր-

ցարաններ և այլն՝ իրենց կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար։

32. Հետևիր բանվոր ու բատրակ յերիտասարդության ֆիզիկական զարգացմանը և ֆիզկուլտուրայի մասսայականացմանը։

33. Դու պետք ե կապված լինես քո թերթի՝ «Ավանգարդի» հետ և միջոցներ ձեռք առնես նրա լայն տարածման համար յերիտասարդության մեջ և այնտեղ լուսաբանես հիմնարկության մեջ աշխատող բանվոր յերիտասարդության կյանքը։

34. Ուշադրություն պետք ե դարձնես վարձողի և բատրակի միջև աշխատանքային պայմանագիր կնքելուն և այդ պայմանագիրը կյանքում անխախտ կերպով կիրառելուն։

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՏԱՐԻՖԻ ՄԱՍԻՆ.

Մինչև այժմ կիրառվող անչափահասներին վարձատրելու ձևը (կարգից կարգ մեքենայաբար փոխադրելը) մի

կողմից հանգեց նրան, որ անչափահասները յերկար ժամանակի ընթացքում միևնույն կատեգորիայով վարձատրվեցին, մյուս կողմից հաճախ բարձրացվում եր անչափահասի տարիքը, ու չեր բարձրացվում նրա վորակավորումը. որինակ՝ ՈՒԿՅԵՄ համառուսական վերջին խորհրդակցությունը համարելով, որ անչափահասների աշխատանքի վարձատրության ձևը չի բղխում իրենց աշակերտ-անչափահասի շահերից, վորոշեց, փոխանակ կատեգորիան մեքենայաբար բարձրացնելու, բարձրացնել նրանց տարիքը—համապատասխան վորակավորման բարձրացման— սովորելու ընթացքում, իսկ առաջին կիսամյակում վարձատրել նրան (աշակերտին) վոչ պակաս քան առաջին կատեգորիայով։

Այսպիսով վորակավորման բարձրացման հետ միասին բարձրացվում ե և. տարիքը։

Դրանով մենք մի կողմից բարելա-

վում ենք մեր տնտեսությունը, մյուս կողմից կպահպանենք անչափահասների իրական աշխատավարձը և մինչև անգամ կբարձրացնենք այն բարձր կատեգորիաների. փոխադրվելու համար աշակերտները տալիս են փորձնական աշխատանք կամ քննություն 3 - 6 ամսից վոչ ուշ։

Այդ քննությունը կամ փորձնական աշխատանքն աշակերտը կարող է տալ յերբ ցանկանա։ Ստուգումը կատարում է Գնահատիչ-Կոնֆլիկտային հանձնաժողովը։

Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել տնայնագործական արտադրություններում զբաղված աշակերտների տարիֆին։ Այստեղ պետք է գործադրել աշխատանքային պայմանագրերի յեզրակացությունները։

Ինչ վերաբերում է գործարանային դպրոցների աշակերտության, մենք այդպիսին առայժմ չունենք, բայց պետք է աշխատել ունենալ։

Անհատ-աշակերտները կարող են հատվճար աշխատանք վերցնել, միմիայն վորոշ վորակավորում ստանալուց հետո։

Կատեգորիան բարձրացնելիս պետք է հաշվի առնել վոչ միայն գործնական, այլ և տեսական գիտելիքները։

ԱՆՀԱՏ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

1. Ձեռնարկություններում յուրաքանչյուր տարվա ու յուրաքանչյուր մասնագիտության անհատ-աշակերտության սովորելու ծրագիր է մշակվում։

Այդպիսի ծրագիր մշակելու համար ընտրվում են կոմիսսիաներ ըստ հաստատության, կենտ-կոմիսսիաներ ըստ արհմիությունների, վորոնց կազմի մեջ մտնում են ԼԿՅԵՄ ներկայացուցիչները, արհմիության ներկայացուցիչները և վարչությունները։ Տեղական կոմիսսիաների վորոշումները պետք է հաստատվեն Կենտրոնական Կոմիսսիայի կողմից, վորից հետո նրանք ուժի մեջ են մտնում։

2. Յուրաքանչյուր աշակերտ պետք է աշխատի գործարանի վորոշ բաժնում։ Մի բաժնից մյուսը առանց լուրջ հիմքերի փոխադրելը բոլորովին անթույլատրելի է։

3. Արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի համար բաժնից բաժին փոխադրելու վորոշ կանոն է մշակվում, փոխադրությունը կատարվում է Գ.-Կ. Հ. և ԼԿՅԵՄ համաձայնությամբ։

4. Յուրաքանչյուր աշակերտ կատարում է մի մասնավոր ուսումնասիրելիք աշխատանքը։ Աշակերտին կողմնակի աշխատանքների համար ոգտագործելը բոլորովին անթույլատրելի է։

5. Աշակերտը վորոշ ժամանակամիջոցում, վոր արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղի համար վորոշված է, բայց վոչ ավել մեկ ամսից, ծանոթանում է գործարանային հաստատություններին։

6. Յուրաքանչյուր աշակերտ պետք է ամբացրած լինի մի բարձր վորակավորում ունեցող վարպետի, վորի վրա դրվում է աշակերտին սովորեցնելու ամբողջ պատասխանատվությունը. յեթե վարպետը հատավճար աշխատանք է կատարում, նրան ամբացված աշակերտը պահվում է հիմնարկության հաշվին։

7. Անչափահասությունից դուրս յեկած աշակերտները, վորոնք ինչ-ինչ պատճառներով չեն կարողացել իրենց արհեստի դասընթացն անցնել, պետք է նշանակվեն այնպիսի աշխատանքի, վոր հնարավորություն տանրանց լրացնելու իրենց պակասները։ Փոխադրման կարգն ու ժամանակամիջոցը վորոշում են Գ.-Կ. Հ. և ԼԿՅԵՄ-ը։

8. Աշակերտների տարիքը բարձրացնելու կարգը սահմանում է ՀԱՄԽ. պետք է իրավունք տրվի ներկայացնելու փորձնական աշխատանք։

9. Արհմիությունները, հիմնարկության վարիչը և ԼԿՅԵՄ կազմում են ամեն մի ձեռնարկության համար վորա-

կավորման ընորոշում՝ աշակերտներին կարգից կարգ փոխադրելու գործը հեշտացնելու համար։

10. Մասնավոր և տնայնագործական ձեռնարկությունների աշակերտների հարցը կանոնավորելու համար արհմիությունները տերերի հետ աշխատանքային պայմաններ կնքելիս մտցնում են համապատասխան կետեր։

Ահա այն բոլորը, ինչ վերաբերում է տարբեր որգաններում աշխատող ՀԼԿՅԵՄ ներկայացուցչին, վոր հինգ մատի պես պետք է գիտենա այս կանոնները և շարունակ ղեկավարվի այս բրոշյուրով։

Աշխատանքս լրացնելու համար մեջ եմ բերում Ժողկոմխորհի վորոշումը պարտադիր տոկոսի մասին, վորը նույնպես անհրաժեշտ է գիտենալ։

ՎՈՐՈՇՈՒՄ

Հ.Ս.Խ.Հ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

3 ապրիլի 1925 թվի

Ձեռնարկներում պատանիների նվազագույն քանակությունը սահմանելու մասին։

Վորակյալ բանվորական ուժն անհրաժեշտ քանակությամբ վերականգնելու և Հ.Ս.Խ.Հ. նրանով ապահովելու նպատակով Ժող. Կոմիսարների Խորհուրդը վորոշեց.

Ի փոփոխումն Հ.Ս.Խ.Հ. Ժող. Կոմիսարների Խորհրդի 1922 թ. դեկտեմբերի 7-ի վորոշման ձեռնարկությունների մեջ պատանիների նվազագույն քանակություն սահմանելու մասին (դեկրետների և վորոշումների հավաքածու 1923 թ. նոյեմբ. 2, հոդ. 12) սահմանել հետևյալը.—

1. Հ. Ս. Խ. Հանրապետության մեջ գտնվող ձեռնարկություններում վորոշել ստորև հիշատակված արդյունաբերական և արտադրական ճյուղերի նկատմամբ այն պարտադիր տոկոսը, վորից պակաս չի կարող լինել 15, 16 և 17 տարեկան հասակ ունեցող պատանիների թիվը տվյալ ձեռնարկության մեջ զբաղված անձանց ընդհանուր քանակության համեմատությամբ։

2. Պատանիների տոկոսի չափը հիշատակված արտադրական ճյուղերում.

1. Պոլիգրաֆիական արտադրության մեջ 10
2. Մեծ կաշիներ մշակող գործարաններում 3
3. Մանր կաշիներ մշակող գործարաններում . . . 5
4. Մեքենայական գործարանում 8
5. Ոճառի գործարանում . 6
6. Ծխախոտի գործարանում . 5
7. Գինու և կոնյակի գործարանում 4

8. Հանքային արդյունաբերության մեջ 8
9. Ճոթեղենի արդյունաբերության մեջ 10
10. Աղյուսի, քրամիտի և տոմետի գործարաններում . . 15
11. Անուշեղենի արտադրության մեջ 7
12. Պահածոյի գործարանում . 10
13. Ձիթահանքերում . . 5
14. Գյուղատնտես., այգեգործության, բանջարաբուծության, մեղվաբուծության և այլ ճյուղերում 10
15. Պոստ-հեռագրական հիմնարկներում 15
16. Սղոցարաններում . . 5
17. Խոզանակներ արտադրող արհեստանոցներում . . . 10
18. Ելեկտրոկայանում . . 6
19. Բամբակազտիչ գործարաններում 8
20. Մետաքսի գործարանում . 5
21. Աղորիքներում . . 4

22. Հողի հետ կապված աշխատանքներում (շինարարական և սև աշխատանք) . . . 3
23. Հյուսնոցներում . . 6
24. Ատաղձագործական արհեստանոցներում 6
25. Բետոնի, յերկաթ-բետոնի արհեստանոցներում . . 6
26. Մաքսատներում և ապրանքների պահեստներում . . 10
27. Բեռների փոխադրության աշխատանքներում . . 10
28. Սայլեր նորոգող արհեստանոցներում 8
29. Ավտոջրային, փոխադրական աշխատանքներում . . 8
30. Փականագործական, մեքենայական արհեստանոցներում . 10
31. Քարտաշության աշխատանքներում 3
32. Ծեփարարության աշխատանքներում 5
33. Ներկարարական աշխատանքներում 7

34. Կենդանագրական աշխատանքներում 10
35. Սալահատակելու աշխատանքներում 3
36. Տակառագործական աշխատանքներում 6
37. Վարսավիրանոցներում . 10
38. Գարեջրի գործարաններում 10
39. Լիմոնադի գործարանում 15
40. Փռերում . . . 10
41. Թիթեղագործական աշխատանքներում 10
42. Գործարանում, մանարանում, կոշկակարանոցում, դերձականոցում, չստանոցում, գլխարկ կարելու և ձիու սարքերի արհեստանոցներում . . . 10
43. Զկնորսական աշխատանքներում 10

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ վարձու աշխատավոր ունեցող ձեռնարկության համար սահմանված տոկոսը կազմում է կես մարդ կամ ավելի, պիտի ամբողջ մարդ ընդունել, իսկ կեսից պակաս կազմելու դեպքում պատանի չի պահվում։

3. Սույն վորոշման 2-րդ հոդվածում հիշատակված պատանիների քանակության նվազագույն չափը պարտադիր է թե պետական և թե մասնավոր ձեռնարկությունների համար։

4. Այն ձեռնարկությունները, վորոնց 15, 16 և 17-տարեկան պատանի աշխատողների թիվը պակաս է սույն վորոշման 2-րդ հոդվածում մատնանշված տոկոսից, պարտավոր են մինչև սույն թվի ապրիլ ամսի վերջը պատանիների թիվը սահմանված քանակության հասցնել։

5. Այն ձեռնարկությունները, վորոնք սույն վորոշման հրատարակման պահին ավելի մեծ թվով պատանի աշխատավորներ կունենան, քան ներկա վորոշման սահմանված չափը, պարտավոր են նախկին մեծ թիվը պահպանել մինչև պատանիների 18 տարեկան դառնալը։

6. Սույն վորոշման 2-րդ հոդվածով պարտադիր նվազագույն չափեր սահ-

մանելը չի զրկում ձեռնարկություններին սահմանված պարտադիր նվազագույն քանակությունից ավելի մեծ թվով պատանի աշխատավորներ ունենալու իրավունքից։

Ծանոթություն.—Պատանի աշխատավորների քանակության կրճատումները կարող են տեղի ունենալ միմիայն բանվորների ընդհանուր թիվը կրճատելիս և համեմատական չափով այնպես, վոր սույն վորոշման 2-րդ հոդվածով սահմանված չափերը չնվազեն։

7. Հ. Ս. Խ. Հ. աշխատանքի ժողկոմիսարիատին իրավունք է վերապահվում ՀԱՄԽ-ի և համապատասխան տնտեսական ժարմինների փոխադարձ համաձայնությամբ պատանի աշխատավորների պարտադիր նվազագույն տոկոս սահմանել նաև արտադրա-արդյունաբերական այն ճյուղերի համար, վորոնք սույն վորոշմամբ չեն նախատեսված, ինչպես և սույն վորոշմամբ սահմանված չափերի փոփոխության

մասին պատշաճ միջնորդություն հարուցել Հ. Ս. Խ. Հ. բարձր որենսդրական մարմինների առաջ։

8. Աշխժողկոմատին և նրան համապատասխան մարմիններին հանձնարարվում է խիստ հսկողություն ունենալ սույն վորոշման ճիշտ գործադրության վրա։

Ժողկոմխորհի նախագահ՝ ԼՈՒԿԱՇԻՆ

Ժողկոմխորհի Քարտուղար՝ ԱԹԱԲԵԳՅԱՆ

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ ՅԵՎ ԱՆԻ ԱՇԽՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՇՏԱՏՈՎ ՅԵՎ ԱՆՇՏԱՏ ԱՍՍԻՍՏԵՆՏԸ (ՈԳՆԱԿԱՆԸ).

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ.

1. Շտատով և անշտատ ասսիստենտուրայի խնդիրն է՝ հսկել, վոր կյանքի մեջ լրիվ կիրառվեն անչափահասների աշխատանքին վերաբերող բոլոր որենսդրությունները պետական, մասնավոր, հասարակական, կոոպերատիվ և տնայնագործական բոլոր ձեռնարկներում։

2. Շտատով, ինչպես նաև անշտատ աշխատանքի ասսիստենտները հանդիսանում են ԼԿՅԵՄ-ի ներկայացուցիչներ աշխատանքի պաշտպանության որգաններում և նշանակվում են ԼԿՅԵՄ-ի ակտիվ անդամների շարքերից ԼԿՅԵՄ գավկոմից և հաստատվում աշխատանքի համապատասխան բաժիններից։

3. Աշխատանքի նպաստավոր պայմաններ ստեղծելու համար ասսիստենտներն ամրացվում են ավելի փորձառու և հին աշխատեսուչներին։

2. ԱՍՍԻՍՏԵՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

4. Աշխատեսուչների ասսիստենտներն իրենց գործունեության ժամանակ ղեկավարվում են գոյություն ունեցող բոլոր որենսդրություններով, հրահանգներով և համապատասխան դիրեկտիվներով անչափահասների աշխատանքի մասին, վորը տալիս է աշխժողկոմատը։

5. Աշխատեսուչների ասսիստենտները

մշտական ժանակցություն են ունենում աշխատանքի տեսուչների աշխատանքներին, միասին քննության յենթարկելով հաստատություններն ու ձեռնարկները։

6. Բացի հիմնարկությունները միասին շրջագայելուց, ասսիստենտները պարտավոր են աշխատեսչի առանձին հանձնարարություններով հաճախել ձեռնարկությունները, հաստատությունները ու տնտեսությունները՝ ծանոթանալու համար անչափահասների աշխատանքի պայմանների հետ և ստուգելու, թե կատարվո՞ւմ են արդյոք աշխատեսուչների արած պահանջները։

7. Ասսիստենտներն իրավունք չունեն ինքնուրույն կերպով հետազոտման արձանագրություններ կազմելու, և հիմնարկներին գրավոր կամ բանավոր պահանջներ անելու աշխատանքի որենքների նկատված խախտումները վերացնելու մասին, այլ կազմում են հետազոտման հարցացուցակը, հանձնում են աշխատեսչին համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար։

8. Անչափահասների աշխատանքի որենքների խախտում նկատելու դեպքում աշխատեսչի ասսիստենտները բազմակողմանիորեն ուսումնասիրում են խախտման փաստը, նրա պատճառները և նշում դրա առաջն առնելու միջոցները, որի մասին իր ժամանակին հայտնում են աշխատեսչին, որն իրեն ներկայացրած տեղեկությունների համաձայն տալիս է վերջնական յեզրակացություն համապատասխան կարգադրությունների ձևով կամ հատուկ լուրջ դեպքերում անձնական լուրջ քննություն է կատարում։

9. Աշխատանքի տեսչության ու հսկողության ընդհանուր խնդիրների ասպարիզում աշխատանքային բոլոր որենսդրությունների (աշխատանքի կոդեքս, տեղական և կենտրոնական վորոշումներ, լրացումներ) կատարման համար ասսիստենտը խստորեն դեկավարվում է

աշխատանքի տեսչության տված ցուցմունքներով (հրատարակված 1923 թվի հոկտեմբերի 16-ին № 123)։

10. Աշխատելով աշխատեսչի ցուցմունքներով մասնակցել աշխատեսչի հետ ընդհանուր աշխատանքներին, ասսիստենտը հատուկ ուշադրություն է դարձնում փոքրահասակների աշխատանքի պաշտպանության հարցին, այն փոքրահասակների ու անչափահասների, վորոնք աշխատում են մասնավոր տնայնագործական և կոոպերատիվ ձեռնարկություններում։

11. Անչափահասների աշխատանքի պաշտպանության մասին գոյություն ունեցող որենքներն իրականացնելու համար ասսիստենտները պարտավոր են՝

ա. Կանոնավոր հաճախել իրենց տեսչության շրջանում գտնվող բոլոր հաստատություններն ու ձեռնարկությունները։

բ. Մասնակցել աշխատեսուչների կողմից բանվորների և ծառայողների ընդունելությանը, ինչպես և անչափահասներին վերաբերող ընդունելություններին։

գ. Մասնակցել պետական, արհեստակցական և ԼԿՅԵՄ կազմակերպությունների բոլոր այն աշխատանքներին, վորոնք կապ ունեն անչափահասների աշխատանքների պաշտպանության հարցի հետ։

դ. Պետական, հասարակական և մասնավոր հիմնարկներում, ձեռնարկություններում, տնայնագործական և առևտրա-արդյունաբերական ու գյուղատնտեսական հաստատություններում աշխատող անչափահասների ճիշտ հաշվառումն կատարել։

3. ԱՍՍԻՍՏԵՆՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.

Ա. Ձեռնարկությունների դիտողությունն յեվ ծանոթացումն նրանց հետ.

12. Նախքան ձեռնարկությունը քննելն ու անչափահասների աշխատան-

քի պայմաններին ծանոթանալն, ասսիստենտը պարտավոր է պարզել, ադմինիստրացիայի, գրասենյակի, ԼԿՅԵՄ բջիջի գործավարի կամ տեղկոմի տվյալներով, այդ հաստատության անչափահասների թիվը, նկատի ունենալով նրանց նվազագույն տոկոսը, արտադրության բնույթը, ինչ աշխատանք են կատարում անչափահասները, և պահպանված է արդյոք նրանց համար վորոշված տոկոսը։

13. Աշխատեսչի հետ, ինչպես նաև նրա հանձնարարությամբ ստուգելիս, թե ինչպես են տարվում հիմնարկության պարտադիր գրքերը և աշխատանքին վերաբերող գործավարությունը, ասսիստենտն ուշադրություն է դարձնում հետևյալի վրա.—

ա. Կա՞ արդյոք փոքրահասակների և անչափահասների գրանցման գիրք և կանոնավոր տարվո՞ւմ է նա։

բ. Բոլո՞ր փոքրահասակ անչափահասները գրված են այդ գրքի մեջ։

գ. Կա՞ն արդյոք հաշվառման գրքույկներ։

դ. Ունե՞ն արդյոք մասնավոր մանր տնայնագործական ձեռնարկությունները աշխատանքի պայմանագիր, վորն արձանագրված է աշխատանքի տեսչության մեջ։

ե. Աշխատո՞ւմ են արդյոք 14—16 տարեկան հասակ ունեցողներ և ունե՞ն արդյոք աշխատեսչի թույլտվությունը դրա համար։

4. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ՀԱՆԳԻՍՏ.

14. Անչափահասների և բանվորների հարցուփորձից, գրքերով, տախտակներով և ուրիշ տվյալներով ասսիստենտները պարզում են՝

ա. 14—16 տարեկան անչափահասների համար կիրառվո՞ւմ է արդյոք 4. ժամյա բանվորական որ։

բ. 16—18 տարեկանների համար կիրառվո՞ւմ է 6-ժամյա բանվորական որ։

գ. Աշխատեցնում են անչափահասներին գիշերները, կամ արտաժամյա աշխատանք ունեն նրանք։

դ. Տեղի չի ունենում անչափահասների բանվորական որվա ավելացում շնորհիվ հատավճար ու հարվածային աշխատանքների։

ե. Տրվում են փոքրահասակներին և անչափահասներին հերթական արձակուրդներ ամառվա ամիսներին (մայիս, հունիս և հուլիս) և ինչքան ժամանակով։

զ. Ոգտվում են անչափահասները վտանգավոր արտադրություններում լրացուցիչ արձակուրդներով։

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ.

15. Ասսիստենտները գործարկումներին, տեղկոմներին կամ արհմիության լիազորներին, ինչպես նաև առանձին բանվորներին հարցուփորձ անելով, աշխատավարձի ցուցակները և ստուգ-

ման գրքույկներն ստուգելով պարզում են՝

ա. Ինչպես է կատարվում աշխատանքի վարձատրությունը։ Տարիֆով, թե նրանից դուրս։

բ. Ինչքան ժամանակ է, որ անչափահասը բավարարվում է միևնույն կատեգորիայով։

գ. Կարգից կարգ փոխադրումը կատարվում է մեքենայորեն, թե վորակավորման բարձրացման հետ զուգընթաց։

դ. Անչափահասի միջին աշխատավարձի չափը։

ե. Վարձատրվում է արդյոք անչափահասի կրճատված բանվորական որը լրիվ բանվորական որվա չափով և հասակավորի համապատասխան կատեգորիայով։

զ. Եթե տեղի ունեն հատավճար և հարվածային աշխատանքներ, ապա վարձատրվում են նրանք և ինչպես։

է. Ստանում են անչափահասները

հավելյալ աշխատավարձ, և ինչպես է վորոշվում նրա տոկոսը։

ը. Հանձնում է արդյոք անչափահասների տարիքային դրույքն աշխատավարձի վորոշված նվազագույնին։

թ. Տրվում է արդյոք աշխատավարձը կոլեկտիվ պայմանագրի սահմանած նորմայով։

ժ. Բաց թողնվում է արդյոք աշխատավարձը 2 շաբաթը մի անգամից վոչ ուշ և տրվում է նա իր ժամանակին, բանվորական ժամին։

ժա. Կատարվում է արդյոք դրամական վարձատրության փոխարինում մթերքներով, բացի պայմանագրերով սահմանվածներից։

ժբ. Զեն կատարվում արդյոք դրամական ապորինի դանձումներ։

6. ՊՐՈՖԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԻԱ.

16. Աշխատեսչի հանձնարարությամբ ձեռնարկությունների պրոֆառողջության և սանիտարիայի անմիջական հետաքրքրություն կատարելիս աշխատեսչի ասսիստենտներն ուշադրություն են դարձնում՝

ա. Կա՞ սապոն և սրբիչ։

բ. Կա՞ լվացարան և յեռացրած ջուր։

գ. Կա՞ սնունդ ընդունելու համար հատուկ շենք։

դ. Մաքրվո՞ւմ են արդյոք կանոնավոր կերպով բանվորական շենքերը փոշուց, սարդից, տաշեղներից։

ե. Նկատվո՞ւմ են անչափահասների մեջ պրոֆեսիոնալ հիվանդության փաստեր ու դեպքեր։

զ. Հիվանդության տեսակն ու պատճառը։

է. Սահմանվա՞ծ է անչափահասներին վնասակար արտադրություններից հեշտ աշխատանքների փոխադրման ժամանակամիջոցը։

7. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՈԴՆՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ.

17. Աշխատեչության կարգադրությամբ հատատության տեխնիկական դրությունն ստուգելու և նախորդ յեղած կարգադրությունների կիրառմանը հետևելու նպատակով աշխատեչի ասսիստենտներն ուշադրություն են դարձնում՝

ա. Թողնո՞ւմ են, վոր անչափահասներն ինքնուրույն կերպով դազգյահների, մեքենաների և այլ տեխնիկական հարմարավոր աշխատանքներ կատարեն, վորոնց վրա կարող են աշխատել միայն հասակավորները։

բ. Մեքենաները և այլն ունե՞ն համապատասխան ապահովեցուցիչ մասեր՝ դժբախտ պատահարներից խուսափելու համար։

գ. Կա՞ն արհեստանոցներում ոդանցքներ և նորմալ գործո՞ւմ են նրանք։

դ. Հատատված են փոշեծծիչներ։

ե. Մաքրվո՞ւմ են բանվորական շեն-

քերն ավելորդ իրերից, յերկաթի կտորներից, մնացորդներից և այլն։

զ. Ստանդ՞ում են անչափահասներն իրենց աշխատանքին համապատասխան արտահագուստ։

է. Զե՞ն լցված շենքերը զանազան նյութերով, և անցուդարձի բավական ճանապարհներ կա՞ն։

ը. Սահմանվա՞ծ են արդյոք անչափահասների ծանրություններ փոխադրելու նորմանները։

8. ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏՈԿՈՍԸ.

18. Անչափահասների պարտադիր տոկոսն ստուգելիս աշխատեչի ասսիստենտներն ուշադրություն են դարձնում հետևյալ մոմենտների վրա.—

ա Ի՞նչ տոկոս է սահմանված տվյալ հիմնարկության համար։

բ. Ի՞նչ տոկոս է լրացված։

գ. Ի՞նչ պատճառներ արգելք են հանդիսանում անչափահասների տոկոսն անցկացնելուն։

դ. Կա՞ն արդյոք հեռանկարներ մոտավոր ապագայում տոկոսը լրացնելու։

ե. Ի՞նչ քանակությամբ աշակերտներ են մտնում անչափահասների տոկոսի մեջ։

զ. Ի՞նչ հասակի աշխատողներ կան տվյալ հաստատության տոկոսի մեջ, և ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում նրանց պարտադիր տոկոսից հանելու։

9. ԱՐՏԱԲՐՈՆԻԱ.

19. Ասսիստենտներն ուշադրություն պիտի դարձնեն նաև, թե գործադրվո՞ւմ է արդյոք հաստատություններում անչափահասների արտաբրոնիա (сверхброня). որինակ՝

ա. Անցկացվո՞ւմ է բրոնիայից դուրս արտաբրոնիա։

բ. Ի՞նչ քանակությամբ անչափահաս է ընդունված արտաբրոնիայի կարգով։

գ. Բացի ապահովագրական որգանների հաշվին պահվողներից, կա՞ն ելի արտաբրոնիայի մեջ մտնողներ։

10. ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

20. Գործարանային դպրոց ունեցող ձեռնարկություն հաճախելիս ասսիստենտները պետք է ծանոթանան.

ա. Կանոնավոր սովորեցնո՞ւմ են։

բ. Կա՞ն թեքումներ նշված ծրագրից։

գ. Կանոնավո՞ր են ոգտագործվում աշակերտները գործբաժինների աշխատանքներում, վորոնք վորակավորում են տալիս։

դ. Ոգտագործո՞ւմ են անչափահասներն իրենց ազատ ժամերը դպրոցներում, ակումբներում կրթություն ձեռք բերելու։

ե. Աշակերտությունն անցկացնող կոմիսսիայի աշխատանքների հետ։

զ. Աշակերտներին, պրոֆկոմների, շրջկոմների ներկայացուցիչներին հարցաքննելով պարզվում են մանկավարժական մասի թերությունները։

21. Աշխատեսչի ասսիստենտներն իրենց հերթական և կրկնակի հարցա-

քննութիւններով ադմինիստրացիայի ներկայացուցիչներից, գործարկումներից, պրոֆկոմներից, շրջկոմներից հայտնաբերում են մանկավարժական մասի պակասութիւնները, նրա կազմի անբավարար լինելը և դպրոցում նկատած բոլոր թերութիւնները կրթության գործի վերաբերմամբ։ Հայտնում են տեսչի միջոցով արհլուսավարչութիւնը, որ այդ պակասութիւնները վերացնելու համար միջոցներ ձեռք առնի։

11. ԽՄԲԱԿԱՅԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ.

22. Ձեռնարկութիւնները հաճախելիս ասպիտանտները պարզում են, թե կա արդյոք խմբակային աշակերտութիւն, ծանոթանում են նրանց վիճակի հետ, նաև առանձնապես ուշ են դարձնում՝

ա. Ի՞նչքան անչափահասներ կան նրանց մեջ մինչև 18 տարեկան հասակը և բարձր, ամեն մեկը առանձին-առանձին։

բ. Սովորեցնելու ժամանակը բրիգադայում։

գ. Կա՞ն աղջիկներ և ինչքան։

դ. Կա՞ ծրագիր և ինչպես է նա կիրառվում։

ե. Բավակա՞ն են գործիքները, դազգյահները և ուրիշ տեխնիկական հարմարութիւնները։

զ. Սովորեցնելու ժամանակամիջոցը խմբակում։

է. Հատուկ շենքի մեջ է գտնվում, թե՞ ուղղակի արտադրության մեջ։

ը. Լինում է պատվերների բացակայություն և ինչո՞վ է դա բացատրվում, վորակյալ ուժի պակասո՞վ, թե՞ ուրիշ պատճառներով։

12. ՊՐՈՖՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

23. Պրոֆտեխնիկական դասընթացներ, պրոֆդպրոցներ, հատուկ տեխնիկական դպրոցներ քննելիս աշխատասուչների ասպիտանտներն ուշադրության են առնում՝

ա. Կրթություն ստանալու տևողությունը։

բ. Սովորողների թիվը ըստ սեռի և հասակի։

գ. Քանի՞ դասարան ունի դպրոցը, և ի՞նչ մասնագիտություններ են սովորեցնում (մեխանիկական, շինարարական, յերկաթուղային, ելեկտրոտեխնիկական)։

դ. Կա՞ն այդ դպրոցներին կից ոժանդակ աշխատանոցներ սեմինարական պարապմունքների համար, գիտական-ցուցադրական դասարաններ և գրադարաններ։

ե. Յեղե՞լ են ավարտողներ, ի՞նչքան և ի՞նչ մասնագիտություններով։

զ. Համապատասխանո՞ւմ է դպրոցն արտադրության պահանջներին և մատակարարո՞ւմ է անհրաժեշտ տեխնիկական ուժեր։

է. Ի՞նչ բացասական կողմեր կան դպրոցի կրթական գործում։

ը. Բավարա՞ր են նյութերը։

թ. Կա՞ն նախապատրաստական բաժանմունքներ։

13. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

24. Մանր ձեռնարկությունները քննելիս, վորտեղ կան անհատ-աշակերտներ (մանավանդ մասնավոր, տնայնագործական), սասիստենտները պարզում են.

ա. Ի՞նչն է պատճառը անհատորեն սովորելու (դպրոցի բացակայությունը, թե՞ չկա սովորեցնելու ավելի լավ միջոց)։

բ. Քանի՞ աշակերտ կա։

գ. Կա՞ ծրագիր և նա կիրառվո՞ւմ է։

դ. Ուշադրությամբ հետևո՞ւմ է վարպետն անչափահասի սովորելուն։

ե. Աշակերտներն ամրացվում են վարպետներին, թե՞ ուղղակի վորակյալ բանվորներին։

զ. Յուրաքանչյուր սովորեցնողին քանի՞ աշակերտ է ընկնում։

է. Աշակերտները կողմնակի աշխատանքի չե՞ն լծվում։

ը. Զեն ոգտագործվում փոքրահասակ անչափահասները վարպետներին կամ տերերին անձնական ծառայություններ անելու, ծխախոտ, մթերքներ, ճաշ և այլ բաներ բերելու համար։

25. Ասպիտեանները հիմնարկությունները հաճախելիս ծանոթանում են ԼԿՅԵՄ բջջի անտեսական աշխատանքների հետ։ Հրահանգներ են տալիս այդ աշխատանքների վերաբերյալ և աշխատեսչի միջոցով ոգնում են ԼԿՅԵՄ բջջին, որ նա բանվոր յերիտասարդության աշխատանքի պայմանները բարելավի։

26. Աշխատեսչների ասպիտեանները կանոնավոր կերպով զեկուցումներ են տալիս ՀԼԿՅԵՄ բջիջների ժողովներում, ծանոթացնում են Միության անդամներին իրենց աշխատանքների, անչափահասների աշխատանքի վիճակի և Միության աշխատանքի պաշպանության խնդիրների հետ։

27. Այն ձեռնարկությունները, որոնք ԼԿՅԵՄ բջիջներ չունեն, ասպիտեանները կուսբջիջների կամ գործարկոմների միջոցով հրավիրում են բանվոր յերիտասարդության ժողովներ։ Այդ ժողովներում նրանք զեկուցում են իրենց տարած աշխատանքների մասին։

28. Աշխատեսչներին և աշխատանքի պաշպանության կազմակերպություններին ասպիտեաններն ամեն ամիս ներկայացնում են գրավոր հաշվետվություն։

29. Ասպիտեաններն արհմիության և կոմյերիտական որգանների թղթակիցներն են, որոնք լուսաբանում են բանվոր յերիտասարդության գրությունը։

30. Թե շատով [illegible] թե անշատ ասպիտեանուրբի ընդհանուր զեկավարությունը [illegible] Հայաստանի Աշխժողկոմատի [illegible] պետական ասպիտեան [illegible]

100

ՀՀ Ազգային գրադարան
NL0766445

1
2352

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.